ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

«13» դեկտեմբեր 2024թ. ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 3

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՐԱՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 12-րդ մասի 4-րդ կետով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցույթի հարցազրույցի փուլի հարցարանը՝ համաձայն Հավելվածի:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Կարեն Թումանյան (Նախագահ)

Էդգար Արսենյան

Ահարոն Ներսիսյան

Դանիել Իոաննիսյան

Անի Չատինյան

Եփրեմ Կարապետյան (Քարտուղար)

Հավելված
Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի
թեկնածուների ընտրության
մրցութային խորհրդի
2024 թվականի դեկտեմբերի 13-ի
թիվ 3 որոշման

ՀԱՐՑԱՐԱՆ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԻ

1. Ավարտված և չավարտված հանցագործությունները.
2. Հանցակցությունը.
3. Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները.
4. Հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի և առարկայի բռնագրավումը.
5. Կոռուպցիոն հանցագործությունների ընդհանուր բնութագիրը.
6. Ընտրակաշառք տալը, ստանալը, ընտրակաշառքի միջնորդությունը. հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելը. ընտրական կամ հանրաքվեին մասնակցելու իրավունքի իրականացումը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը կամ հանրաքվեին մասնակցող անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացումը խոչընդոտելը.
7. Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը.
8. Կուսակցության օգտին խոշոր չափերով ապօրինի նվիրատվություն ներգրավելը, Կուսակցությանը նվիրատվություն կատարելու՝ օրենքով սահմանված չափը չգերազանցելու արգելքը կամ օրենքով չթույլատրված աղբյուրներից նվիրատվությունների արգելքը խոշոր չափերով շրջանցելը.
9. Կաշառք ստանալու, կաշառքի միջնորդության կամ իրական կամ ենթադրյալ ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելու պատրվակով գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը.
10. Ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.
11. Փողերի լվացումը.
12. Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը.
13. Պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելը.

14. Ապօրինի հարստանալը.
15. Կաշառք ստանալը, կաշառք տալը, կաշառքի միջնորդությունը.
16. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելը.
17. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելը, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ հայտարարագիր չներկայացնելը.
18. Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելը՝ իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով.
19. «Քրեական հետապնդում» և «մեղադրանք» հասկացությունները.
20. Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները.
21. Քրեական դատավարության հանրային և մասնավոր մասնակիցները, մրցակցությունը քրեական դատավարությունում.
22. Ապացույցներ և ապացուցում.
23. Գույքի արգելադրում.
24. Ապացուցողական գործողությունները.
25. Հարկադրանքի միջոցները.
26. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, դրանք իրականացնող մարմինները, կարգը և արդյունքները.
27. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները՝ որպես ապացույց.
28. Համագործակցության և մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթը վարույթները և դրանց առանձնահատկությունները.
29. Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները.
30. Քրեական վարույթ չնախաձեռնելու, քրեական վարույթը կարճելու, քրեական հետապնդում չհարուցելու և հարուցված քրեական հետապնդումը դադարեցնելու մասին վարութային ակտերի բողոքարկումը.
31. Վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը, Վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները.
32. Կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկա.
33. Միջազգային իրավական փոխօգնություն.
34. Իրավաբանական անձի տեսակները, վերակազմակերպումը և լուծարումը, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը.
35. Պետական և համայնքային կառավարչական հիմնարկների, ոչ առևտրային կազմակերպությունների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները.
36. Գործարքի հասկացությունը, գործարքի տեսակները և ձևը, գործարքի վավերության պայմանները.
37. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը.
38. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության սկզբունքները
39. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի լիազորությունները
40. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջները

41. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կարգապահական պատասխանատվության հիմքերը.